ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի № 1486-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ _____ 2018 թվականի № _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի № 1486-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող մարզական կազմակերպությունների աշխատողների պաշտոնային դրույքաչափերին լրավճարներ սահմանելու մասին» №1486-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մարզական կազմակերպությունների և հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերին լրավճարներ սահմանելու մասին».

2) Որոշման 1-ին կետի «Սահմանել Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի պետական հիմնարկների և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող

մարզական կազմակերպությունների աշխատողների պաշտոնային դրույքաչափերի լրավճարները՝ համաձայն հավելվածի» բառերը փոխարինել «Սահմանել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մարզական կազմակերպությունների և հիմնարկների աշխատողների պաշտոնային դրույքաչափերին լրավճարները՝ համաձայն հավելվածի» բառերով:

2. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
3. Որոշման 2-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հավելված
ՀՀ կառավարության 2018 թվականի
---------- ----- -ի

№ -------- -Ն որոշման

«Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
դեկտեմբերի 17-ի

№ 1486-Ն որոշման

Լ Ր Ա Վ Ճ Ա Ր Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԵՎ ԱՅԼ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ

ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻՆ ՍԱՀՄԱՆՎՈՂ

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի մարզական կազմակերպություններում և հիմնարկներում աշխատող՝ օլիմպիական

խաղերի, աշխարհի, Եվրոպայի չեմպիոններին և մրցանակակիրներին, ինչպես նաև նրանց մարզիչներին համապատասխան մարզական կազմակերպությունների և հիմնարկների համար նախատեսված հատկացումների հաշվին սահմանվում են ամսական լրավճարներ՝ հետևյալ չափերով՝

1) օլիմպիական խաղերի չեմպիոններին՝ 100 հազար դրամ.

2) օլիմպիական խաղերի չեմպիոնների մարզիչներին՝ 50 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 4 տարի ժամկետով.

3) օլիմպիական խաղերի 2-րդ մրցանակակիր մարզիկներին՝ 80 հազար դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 40 հազար դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 2 տարի ժամկետով.

4) օլիմպիական խաղերի 3-րդ մրցանակակիր դարձած մարզիկներին՝ 60 հազար դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 30 հազար դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

5) աշխարհի չեմպիոն դարձած մարզիկներին՝ 80 հազար դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 40 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 2 տարի ժամկետով.

6) Եվրոպայի չեմպիոն դարձած մարզիկներին՝ 60 հազար դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 30 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

7) աշխարհի և Եվրոպայի մրցանակակիրներ դարձած մարզիկներին՝ 40 հազար դրամ, իսկ նրանց մարզիչներին՝ 20 հազար դրամ՝ նրանց սաների մրցանակակիր դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով:

8) երիտասարդների աշխարհի չեմպիոն դարձած մարզիկի մարզիչներին՝ 20 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

9) երիտասարդների Եվրոպայի չեմպիոն կամ երիտասարդների աշխարհի առաջնության մրցանակակիր դարձած մարզիկի մարզիչներին՝ 18 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

10) պատանիների աշխարհի կամ Եվրոպայի չեմպիոն կամ երիտասարդների Եվրոպայի առաջնության մրցանակակիր դարձած մարզիկի մարզիչներին՝ 15 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

11) պատանիների աշխարհի կամ Եվրոպայի առաջնության մրցանակակիր դարձած մարզիկի մարզիչներին՝ 12 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն

դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից ՝ 1 տարի ժամկետով.

12) Եվրոպական խաղերի կամ համաշխարհային ուսանողական մարզական խաղերի հաղթող դարձած մարզիկի մարզիչներին՝ 30 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով.

13) Եվրոպական խաղերի կամ համաշխարհային ուսանողական մարզական խաղերի մրցանակակիր դարձած մարզիկի մարզիչներին՝ 20 հազար դրամ՝ նրանց սաների չեմպիոն դառնալուն հաջորդող տարվա հունվարի 1-ից՝ 1 տարի ժամկետով։»։